ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«16» ապրիլի 2019 թվականի N 84-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՆԹԱԿԱ ՀԱՆՔԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄԵԿԱՆԳԱՄՅԱ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշումը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2015 թվականի մայիսի 6-ի թիվ 139-Ն հրամանով հաստատված հավելված 1-ի 1-ին, 9-րդ և 10-րդ կետերի պահանջները, հաշվի առնելով հրամանի հավելված 2-ով սահմանված սահմանափակումների ենթակա հանքային հումքի տեսակների ցանկի 1-ին կետի 4-րդ ենթակետը, ինչպես նաև «ԱՆՄՈՌ» ՓԲ ընկերության կողմից 2019 թվականի ապրիլի 15-ի թիվ 13 գրությունը և Ընդերքի գործակալության պետի պաշտոնակատարի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԱՆՄՈՌ» ՓԲ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել հանքային հումքի տեսակի՝ ՀՀ տարածքից երրորդ երկրներ արտահանման մեկանգամյա լիցենզիա ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7103100 009 ծածկագրին դասվող 50,0 (հիսուն) կիլոգրամ երկնագույն փիրուզի բնական չմշակված քար Ամերիկայի Միացյալ Նահանգներ արտահանելու նպատակով:
2. Սահմանել հանքային հումքի տեսակի՝ ՀՀ տարածքից երրորդ երկրներ արտահանման մեկանգամյա լիցենզիայի գործողության ժամկետը՝ տրման պահից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Ընդերքի գործակալության պետին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել մեկանգամյա լիցենզիայի հանձնումը Ընկերությանը:
4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

4/16/2019

X

VERIFIED OCSP 16-Apr-19 18:29:42 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118